

տութեամբ հչ միայն կարող էր ինքն իրանկառ ավա  
և ամբողջ մի կայսրութիւն։ Նա՝ բանուն այնպիսի հանդարտ,  
մեղմ բայց վսեմ վարք ունէր, որ մենք նրան տեսնելու օրից՝  
նրա մասին խօսելիս՝ ճարամ բանուա էինք կոչում նրան։

Դեսպանն իրան յանձնուած նամակը մատուցեց թագու-  
հուն, որը ստանալով հետաքրքրուեց իմանալ թէ արդեօք Պարս-  
կաստանի մեծ բանուն իր ձեռքով էր գրել թէ հչ Մենք տե-  
սանք որ դեսպանը կարմրեց շփոթութիւնից, որովհետեւ, աւաղ  
պարսիկ տիկինը գրել չգիտէ, պարսիկ տիկինը չունի այդ կա-  
տարելութիւնը և հետևապէս, զետուանը ի՞նչ պատասխան էր  
կարող տալ թագուհու հարցին։ Նա վերջապէս խոսդովանուեց,  
որ պետական մեծ մոնշին էր գրել նամակը, և երբ թագուհին  
նայեց թարգմանութեամբ՝ ժպտաց. բայց թէ այդ ժպիտը ար-  
տայայտութիւն էր հիացմունքի թէ, ուրիշ բանի՝ ներկայ եղող-  
ներից հչ մէկը չկարողացաւ ասել մեզ։

Նա յետոյ քննական աշքով նայեց լնծաներին և իր ու-  
շադրութիւնը դարձրեց գլխաւորապէս պարսկական իգական  
սեռի ամբողջ ձեռք զգեստի վրայ։ Այդ զգեստի ասեղնազոր-  
ծած նկարները, կտորների աղնուութիւնը և դրա վրայի ոսկու  
և գոհարների փայլունութիւնը նրան հիացրեց։ Նա շատ ցան-  
կանում էր որ իրան բացատրութիւն տրուէր այդ զգեստի ա-  
մեն մի մասի վրայ։ Սենեակում գտնուող բոլոր կանայքը հաւ-  
ւաքուեցին դեսպանի շուրջը, երբ վերջինս բացատրում էր դը-  
րան հագնելու ձևը։

Նրանք շատ զարմացան շապկի ձևի և կարի վրայ, և մի-  
ևնոյն ժամանակ հետաքրքրուեցին թէ ինչու դա այդքան կարճ  
էր։ Նրանք շատ նշմարանքներ արեցին ջիւրբէների և ժակէտ-  
ների վրայ, բայց երբ առաջ բերուեց վարտիկը, նրանք չնա-  
յած որ ակնածում էին թագուհու ներկայութիւնից, այնուամե-  
նայնիւ այնքան զուարճացան, որ սկսեցին քահ-քահ ծիծաղել։  
Նրանք սկսեցին մէկ իրանց նայել, մէկ վարտիկին։ Նրանց  
խնդութիւնը անդիմադրելի էր։ Նրանց խնդութեան առարկան—  
վարտիկը՝ որ բամբակով ու ճամկաւոր դիպակով այնքան հաս-  
տացրուած էր՝ փայտի պէս ուղիղ կանգնել էր սենեակի մէջ  
տեղում, և անշուշտ զարմանալի հակապատկերն էր ներկայաց-  
նում ֆրանկ կանանց թոյլ, ծփուն զգեստների։

Ի միջի այլոց կար և մի արազգիր<sup>1)</sup>, որը շատ հիացմունք  
պատճառեց, որովհետեւ ասեղնազործութեան շատ մեծ աշ-

1) Մի տեսակ գլխարկ. բառական թարգմանութեամբ նշանակում է  
«քրախնք բանող»։

խատանք էր թափուած դրա վրայ։ Բոլոր ներկայ եղողները հետաքրքրուեցին իմանալու թէ այզպիսի փոքրիկ գլխարկ բնչ հնարքով էր կարող գլխի կատարի վրայ դրուել և մնալ առանց վայր ընկնելու։ սակայն երբ դրա համար գործածուող գլխաճաղերը դուրս բերուեցին՝ բանը պարզուեց։ Թագուհին հաւանեց և գնահատեց մի քանի շատ գեղեցիկ վերժակներ, ինչպէս և մի քանի քաշմիրի շալեր և Սպահանի թաւիշներ։

Դեսպանը բաւական վարկ շահեց բացատրելով մոմիայի<sup>2)</sup> (ընծաներից մէկն էլ մոմիայ էր, որ այնքան մեծ անուն ունի Պարսկաստանում) բժշկական յատկութիւնները, որից նա բերել էր մի փոքրիկ քանակութեամբ մի կիտուածանկար տուփի մէջ, նա ասաց, որ եթէ մի մարդի, կամ ձիու կամ վառեակի սրունքը կոտրուի և այդ սպեղանուց մի վիրակապի վրայ բսուի ու կապուի կոտրուած տեղին՝ մի ամիս չըրացած բոլորովին կը բուժուի։ Այդ նա ասաց, սակայն մեզ շրջապատողների դէմքից երևաց, որ նրանք չհաւատացին նրան։

Թագուհու ներկայութիւնը մեզ այնքան զբաղեցրել էր, և մենք այնքան տարուել էինք նրանով, որ դեռ այս ու այն կողմը չէինք նայել տեսնելու այն գեղեցկուհիներին—նրա դատըրերին, որոց մասին այնքան բաներ էինք երեսակայել։ Մենք ոչ լուսնանման երեսներ տեսանք, ոչ «չինարի բոյ», ոչ ջէրանի աչքեր, ոչ մետաքսափայլ և մինչև ուսները հասնող մազերի ծամեր։ բայց շուտով մենք գլուխ տուինք մի քանի պճնազարդ զգեստներով տիկինների, որոնց տեսանք թէ չէ՝ բացականչեցինք «մաշալլահ, մաշալլահ», որպէսզի չար աչքը չհարուածէր նրանց։

Այդ տիկինները մեզ շատ բաներ հարցրին քաղցրութեամբ, և թէպէտ մենք տեսանք որ թագաւորի դստրերի մասին մեր կազմած գաղափարները (որ առաջացել էին երեսակայութիւնից և աւելի այն պատմութիւններից որ մենք կարդացել էինք «Անթարում» և «Հազար ու մէկ գիշերում»), չհաստատուեցին՝ այնուամենայնիւ մենք բաւարարուեցինք նրանով որ այս երկրում, քողածածկ երեսը աւելի պակաս նշանակութիւն ունի քան մեր երկրում, և որ բանականութիւնն ու զգայութիւնը կատարում էին պահապանների և դուէնաների պաշտօնը։

Մենք անձկութեամբ հետաքրքրուեցինք իմանալու, թէ արդեօք թագաւորի դստրերը ամուսնացած էին թէ ոչ սակայն զարմանալի, մեզ ասուեց թէ «նրանք ամուսնացած չեն»։

2) Պատուական իէժ, որ ծորում է մի ժայռից Քիրմանում։

— Ինչպէս, հարցը գեսպանը մէհմանդարից. ինչպէս, ձեր թագաւորը ինչմւ մեր Շահի պէս չէ անում. նա ինչմւ չէ պարտաւորացնում իր վէզիրներին և մեծ խաներին որ իրանց ժակատը տրորեն արքայական պալատների սեամերին՝ որպէս ամենամեծ շնորհը որ կարող են վայելել՝ ամուսնանալով իր աղջկիների հետ. Մեր Շահը ոչ միայն զիջում է այդպիսի շնորհներ անել, այլև յաճախ ընդարձակում է իր հարստութիւնը, շնորհելով իր վեզիրներին իր դստրերը՝ որպէս պարզե, շատ անգամ էլ նրանց վրայ աւելացնելով աւելի հասակաւոր բանուները—նրանց մայրերը: Եւ Շահին մօրուքը—վկայ, շարունակեց գեսպանը, ես երդում եմ որ, եթէ նրանք—վեզիրներն ու մեծ խաները, իսկոյն իրանց երեսի վրայ չը ընկնեն և գետինը չամբուրեն՝ «արքայից արքայի ստուերն երբէք չպակսի» ասելով նրանց գլուխները մի սկ փողի նշանակութիւն չեն ունենալ... Երդում եմ ձեր հօր մօրուքով որ մենք այդպիսի խնդիրները աւելի լաւ ենք կարգադրում Պարսկաստանում:

Աւելին հետաքրքրուելով՝ մենք իմացանք որ, Փրանկների մէջ արքայազնները ամուսնանում են մուալումանների սովորութեան համեմատ, այսինքն աղան ու աղջիկը առաջուց չեն տեսնում միմիանց, այլ հէնց այնպէս լուս են միմիանց մասին արած փոխադարձ նկարագրութիւններն և ամուսնանում են: Փեսան իր կողմից ուղարկում է մի ձեր կին տեսնելու հարանցուին, որը հեռուից սիրում և յետոյ տարւում է փեսայի մօտ, լինի վերջինս գեղեցիկ կամ տգեղ՝ նա, աղջիկը ամուսնում է նրա հետ:

Մենք մէհմանդարի ականջին ընկնելով հարցը ինք, թէ արդեօք մեղ մօտ կանգնած տիկիններից որմնք էին թագաւորի ստրկուհիները. բայց նա կրկին ասաց այն՝ ինչ՝ առաջ էլ ասել էր ու մենք երբէք չէինք հաւատացել: Նա դարձեալ ասաց, որ նորին մեծութիւնը ստրուկներ չէ պահում, և որ նա միմիայն մէկ կին ունի:

— Բայց նա իր պալատում պարունիներ չժւնի, հէքիսաթիւներ չժւնի, իրան քնացնողներ չժւնի, հարցը ինք մենք:

Մէհմանդարը մեղ հաւատիացրեց որ Փրանկների պալատներում այդպիսի անձինք չեն հարկաւորւում ու չեն պահում, որ մարդիկ ու կանայք միասին են պարում, որ նրանք պարում են միմիայն իրանց զուարձութեան՝ և ոչ թէ ուրիշ բանի համար: Նա ասաց, որ Փրանկները խորշում են հէքիսաթիւներից, ամենակին չեն հովանաւորում նրանց:

Մենք հեռացանք թագունու մօտից՝ աչքներս աւելի բացուած քան էին մեր տեսակցութիւնից առաջ: Ամեն օր մենք

Նհր-նմբ բաներ էինք տեսնում ու լսում, և ինչ բան որ առաջ անհասկանալի էր մեզ համար՝ մասնաւորապէս կանանց վերաբերմաբ՝ ոկտոմբ էր աւելի պարզուել և աւելի հասկանալի դառնալ:

Գլ. իգ.

Մեքքայի կողմը գտնելու դժուարութիւնները: Պարսիկները վճռում են գործադրել իրանց սովորութիւնները:—Նրանք որոշում են իրանց հարկաւոր եղած մսի համար ոչխարը իրանց ձեռքով մորթել:

Մենք այնքան ցոփ կեանք էինք անցկացնում, որ օր աւուր թուլանում էինք մեր օրեկան որոշ ժամանակներում աղօթելու և լուացուելու պարտականութեան մէջ: Մոհամէդ բէգին սուկում էր պատճառում այս: Նա մեր հաւատի խիստ պաշտպանն ու նախանձախնդիրը լինելով՝ անդադար պարսաւում էր մեզ և խիստ կերպով պնդում էր որ հարկաւոր էր մեզ մաքուր մնալ և չվարակուել մեզ զրջապատողներից, չհետևել նրանց օրինակին —այն անհաւատների օրինակին՝ որոնք իսկապէս, կարծես թէ ապրում էին աշխարհում, անկրծն, անհաւ ատ: Նա բաւական ժամանակ էր, ինչ մտահոգութեամբ աշխատում էր որոշել զէրլէյի<sup>1)</sup> ճիշտ կողմը. բայց այդ բանը դեռ գոհացուցիչ կերպով չէր աշողուել իրան: Դժբաղդաբար նրա զէրլէ նէման<sup>2)</sup> կոտրուել էր և նա կասկածում էր որ, եթէ մենք մի կողմացոյց ճարէինք մեր հաւատը ծաղրող անհաւատների միջից՝ արդեօք դա կարդող կլինէր մեզ ցոյցտալ ճիշտ ուղղութիւնը:

Այդ էլ թողած՝ նա բոլորովին երկվալի մէջ էր ընկել, որովհետ առ այն օրից ինչ մենք Անգլիա էինք հասել, նա գոնէ մէկ անգամ էլ արեկի գոյն չէր տեսել: Նա սկսել էր հաւատալ որ, Պարսկաստանում Ֆրանզոստանի մասին լսուած պատմութիւնները ճիշտ են, և որ Անգլիայում արե չկայ:

Նէրլէյի կողմը որոշել կարողանալու յոյսը կտրեց նա, և այդպէս յուսահատ մնաց՝ մինչև մի առաւօտ նա մեր ծառաներից շատերի հետ միասին նետուեց դեսպանի մօտ գոչելով՝ «մուջդէհ»,<sup>3)</sup> արևն եկել է»:

1)Մէքքայի կողմը, գէպէ ուր մահմեդականները աղօթելիս դարձնում են իրանց երեսները: 2)Կողմացոյց: 3)Աւետիս:

Եւ, յիրաւի, երբ մենք վեր նայեցինք դեղնագոյն մթնութորդի մէջ, որ բաղկացած էր ծուխից և գոլորշիներից՝ տեսանք արեգակին։ Սակայն մեզանից շատերն սկսեցին կասկածել։ Նրանք չէին կարողանում հաւատալ որ իրանց տեսածը նոյն փառաւոր լուսատու մարմինն էր որ փայլում էր Պարսկաստանում։ որովհետև այնտեղ՝ մեր երկրում, ոչոք այնքան զօրաւոր աչք չունէր որ կարողանար նայել նրա պայծառութեանը, այն ինչ այստեղ՝ մենք կարողանում էինք հանգիստ կերպով նայել նրան ճիշտ այնպէս՝ ինչպէս նայում ենք լուսնեակին։

Ի՞նչնէ, երբ մեզ մի կերպ համոզեցինք որ մեր տեսածը խակապէս արեգակին է՝ շատ ուրախացանք. և քանի որ այս բարեգուշակ տեսարանը տեղի ունեցաւ մի «սպիտակ օր»,<sup>1)</sup> այսինքն ամսի տամանինքերորդ օրը, մենք դեսպանին շնորհաւորեցինք, ասելով, «մոբարէք, մոբարէք»<sup>2)</sup>։ Մոհամէդ բէգն էլ, միենոյն ժամանակ, համոզուեց որ ինըը դտել էր Մէքքայի ճիշտ կողմը։

Բայց արեգակի վրայ մեր զգացած մեծ ցնծութիւնը պատճառ դարձաւ հաստատելու, որ անգլիացիներից շատերը բոլորովին անտեղեակ էին մեր կրօնի մասին, որովհետև նրանք մեզ կրակապաշտների տեղ դրին և եզրակացրին որ իրը թէ մենք արևին ենք պաշտում, երկրպագում ենք արեգակին։ Նրանց խաներից մէկը—մի ականաւոր լորդ, որը նստում էր թագաւորի ժողովներում և իր կարծիքն յայտնում էր գործերի յարմարութեան և անյարմարութեան մասին, երբէք չէր մոտենում դեսպանին առանց ասելու, «հա պարմն, էլի դեռ արևը չկմյա»։

Մի օր, երբ այնքան ցուրտ էր որ ջրերը սառոյց էին կապել, այդ խանը գալով դեսպանի մօտ, որը վառարանի առաջ նստած տաքսմում էր՝ ասաց նրան։

—Օ՛ պարմն, ես տեսնում եմ որ դուք կրակ էք պաշտում։

Խանի այս խօսքի վրայ, Միհրզա Ֆիրուզը բարկացաւ և գտառնալով ինձ որ իր առջև կանգնած էի՝ բացականչեց։

—Այս ի՞նչ խօսքեր են... այս մարդը չգիտէ որ եթէ մենք կրակապաշտ լինէինք՝ գոնէ չէինք պաշտիլ իրանց երկրի

<sup>1)</sup> Պարսկաստանում մնութիւնպաշտ մարդիկ տարբերութիւն են դնում բարեգաստ և շարաբաստ օրուայ մէջ՝ ու ու սպիտակ կոչելով նրանց։ Ամսի 13, 14 և 15-ը օրը, նրանք սպիտակ են համարում։

<sup>2)</sup> Շնորհաւոր, բարեգախառնութիւն։

այս զգուելի, ծուփ անող կրակը։ Նոյն իսկ գեաբերը<sup>1)</sup> երկրայութեամբ են վերաբերուու դէպի իրանց կրակի մաք-  
ռութիւնը, որչափ առաւել մենք որ նրանց վրայ նայում ենք  
որպէս ամենապիղծ անհաւասաների։

Յետոյ դառնալով մէհմանդարին՝ ասաց.

— Ի սէր Ալլահի, ասացէք այդ խանին որ մենք մեր  
երկրում ուրիշ ոչ մի ժամանակ երբէք կրակ չենք պաշտում,  
միայն թէ երբ ցուրտ է լինում։

Միրզա Ֆիրուզի այս խօսքին՝ Մոհամէդ բէգը որ ներկայ  
էր՝ աւելացրեց.

— Եւ ասացէք նրան, որ մեր սուրբ Մարգարէն, (օրհնեալ  
լինի նրա անունը) մեր սուրբ գրքի քառասուն մէկ երրորդ  
սուրբէյում պատուիրում է՝ «պաշտեցէք ոչ արև, ոչ լուսին, այլ  
միմիայն Ալլահին՝ որը ստեղծել է նրանց»։

Այս խօսքերը, ինչպէս երեաց, բաւականութիւն չտուին  
խանին։ Մէհմանդարի թարգմանութեամբ՝ նա մտաւ երկար  
բացատրութիւնների մէջ մի հինաւուրց անհաւատի մասին,  
որը, ինչպէս յայտնուեց, շատ աւելի տեղեկութիւններ էր  
ունեցել քան մեր պատմագրները, և որը, իր գրուածքներով  
հաւատացրել էր այս խանին ու ամբողջ Անգլիային որ, իր  
թէ մենք կրակապաշտ ենք, որ մենք մեր ձիերի վկները կըտ-  
րում ենք ի պատիւ արեն։

— Հա, հա, բացականչեց դեսպանը, որը միշտ պատրաստ  
էր մի կատակ անելու. հա, հա, ես տեսնում եմ որ դուք ձեր  
երկրում արև չունիք, ուրեմն թոյլ տուէք ինձ հարցնել թէ՝ ի  
պատիւ թրին էք դուք ձեր ձիերի պոչը կարում։

Խանը թողեց հեռացաւ, տրորելով իր ձեռքերը և ասե-  
լով՝

— Կրակը շմատ լաւ բան է, կրակը շմատ լաւ բան է։

Ցաւելով այդ ազգի տղիտութեան վրայ, որոնց մէջ մեզ  
վիճակուած էր ապրել, մենք վճռեցինք այլևս զանցառութեան  
չտալ մեր կրօնական պարտականութիւնները, այլ պինդ փարել  
այն պաշտամունքներին՝ որ մեր սուրբ Մարգարէն սահմանել է  
մեղ համար։ Մենք վճռեցինք պաշտպանել մեր ճշմարիտ հա-

1) Դեաբերը իրանց սուրբ կրակը վառ են պահում այնպիսի վառե-  
լիքով՝ որ ոչ ծուփ է անսում, ոչ էլ հոտ է աալիս Նրանք թոյլ չեն տալիս  
որ այդ կրակի հետ խանուի ոսկոր կամ որևէ ուրիշ գարշանոտ կամ կեղ-  
տոս նիւթ։ Նրանք թոյլ չեն տալիս որ կրակը կպցնելու համար, որև  
է մէկը իր բերանով փչի, մի դուցէ անմաքուր հոտ կամ շունչ խառնուի  
զըս հետ։

ւատը, և հետևաբար, որոշեցինք ոչխարը մեր ձեռքով մորթել մեղ հարկաւոր եղած միսն ունենալու համար:

Երբ անգլիացի անհաւատները տեսան որ մեր խոհարար Հասանը պատրաստում էր մեր տան մէջ՝ սենեակների մէկում մի ոչխար մորթել՝ բողոքի ձայն բարձրացրին այն կեղտոտութեան դէմ՝ որ առաջ պիտի գար այդպիսի սովորութիւնից. սակայն երբ նրանք լսեցին Մոհամէդ բէզին գոռալիս՝ «բիսմիլլահ», և բացատրելիս մեր այն օրէնքը որ արգելում է մարդուն ուտել այն՝ որից արիւն չէ հոսել նրանք մնացին ապշած, շուարած և, զիջանելով՝ գլուխները կախ գցեցին:

Միըզա Ֆիրուզն էլ անօրինեց որ այդ՝ «օրից» մորթուելիք հաւերի վզները պարսից սովորութեան համեմատ կտրուէին ու գետին գցուէին, որպէսզի նրանցից արիւն գնայ մինչև մեռնէին, այնպէս որ, Ալլահի օրհնութեամբ, մենք կարողանայինք առանց խղճահարուելու ուտել մեր կերակուրը:

Այս սովորութիւնները վերահաստատելուց յետոյ, մենք սկսեցինք ապրել և կերակուել աւելի հանգիստ կերպով քան արել էինք այն օրից՝ ինչ հեռացել էինք մեր երկրից, թէպէտ մենք հանգուած էինք որ, ապրելով մի անմաքուր երկրում, մեր աղօթքները ոչ թէ նոյն օգուտներն և արդիւնքները չէին կարող ունենալ, այլ կիսով չափ էլ չէին կարողանայ ունենալ ինչ ունենում էին մեր սեպհական հողի վրայ:

Մոհամէդ բէզը սպառնաց որ, երբ մենք վերադառնանք Պարսկաստան՝ մոլլահները վճիռ կարձակեն որ մենք կրկնակի աղօթք անենք, ասելով թէ՝ չկայ բէհէշտ<sup>1)</sup> այնպիսիների համար, որոնք իրանց աղօթքները վեր են առաքում Ալլահին մի երկրից, որը լի է խոզերով և ողողում է գինիով. որովհետեւ այդպիսի երկրից վեր առաքուած աղօթքները ճանապարհին կը բռնուեն նախ քան նրանց՝ ամենաբարձր երկինք համանելը:

Մոհամէդ բէզի այս խօսքերը հաճելի կերպով ազդեցին մեղ, և մեզանից շատերը բոլորովին թողին աղօթելլ. որովհետեւ, ասացինք մենք, «եթէ մենք պիտի պարտաւորուենք Պարսկաստանում կրկնակի աղօթք անել, ուրեմն էլ իսչի՞ համար աղօթենք քանի գեռ Անգլիայումն ենք.

Ինչեւ, մենք կամաց-կամաց սովորեցինք դուրս գալ փողցները, թէս մեր զգեսան ու մեր արտաքին տեսքը մեծ ուշադրութիւն էր գրաւում: Քաղաքի մեծ լաբիւրինթոսից անցնելիս՝ մենք վախենում էինք որ մի դուցէ չկարողանանք

<sup>1)</sup> Դրախտ:

կրկին ճանապարհ գտնել դէպի տուն։ Ոչ մի բան չկար որ ուղղութիւն տար մեր քայլերին, որովհետև բոլոր աները նոյն ձևն ունէին, բոլոր տան դռները միանման էին։ Բոլոր պատուհանները միաձև էին։ Ոչ բացնիք կար, ոչքարվանսարա, ոչ սափրիչի խանութ, ոչ աղբակոյտ՝ որ գտնէ նրանցով մի նշանաւեղ ունենայինք։ Մի փողոց կար, որ անվերջ, անծայր էր և աւելի ուղիղ՝ քան Սպահանի չահար բաղը։<sup>1)</sup>

Մենք յաճախ ճանապարհ էինք կորցնում, մինչև անգամ մեր տնից շատ հեռու էլ չգնացած՝ էլի ճանապարհ էինք կորցնում։ Ի վերջոյ, ես զնուեցի գործ դնել մի հնարք—մի հնարք՝ որ ես աջողութեամբ գործ էի դրել Մազանդրանի անտառներում, երբ թիւրքմէնների գէրին էի։ Այդ անտառների ծառերի մօտից անցնելիս՝ ես նրանց վրայ դանակով կտրում, նշան էի անում, և այս միջոցով, երբ ճանապարհ էի կորցնում, կարողանում էի կրկին գտնել։ Եյստեղ ես մի կտոր կաւիճ ճարեցի և ամեն մի փողոցի անկիւն հասնելով՝ նշան էի անում, և ինձ աջողում էր այդ հնարքով շատ հեռու տեղեր գնալ և վերադառնալ տուն, առանց որևէ մէկի ընկերակցութեան կարիքն զգալու։

Սակայն իմ այս շրջագայութիւնները վտանգաւոր էին, որովհետև մենք մի տարօրինակ ժողովրդի մէջ էինք ապրում և հազիւ թէ մի օր անց էինք կացնում առանց մի արկած ունենալու։ Մի անգամ ես բաւական հեռու գնացի մեր տնից, Մոհամէդ բէգը հետո էր. բարեբախտաբար մենք հասանք մի կանաչ դաշտ, ուր շատ անհաւատներ ճեմում, զքօսնում էին։ Գուցէ քրիստոնէական մի տօն էր այդ օրը. շատ սիրուն օր էր, արեւ փայլում էր պայծառ ինչպէս մեր երկրում։ Մենք հասանք մի գեղեցիկ տեղ—մի մարգագետին՝ որի դալար խոտը գորգի պէս հարթ ու փափուկ էր։ Մոհամէդ բէգը գոչեց, «Ալլահ, Ալլահ, ինչ հմայիչ տէսք է այս, ինչ լաւ տէղ է աղօթելու համար։ Այդ լուսէին մէսջիդների մէկի ժամացոյցը յայտարարեց անգիւական կէս-օրը։ Մոհամէդ բէգը այլևս չկարողացաւ զսպել իրան։

—Ահա զճէր, <sup>1)</sup> ասաց նա. Թէպէտ մենք այստեղ մուէզին չունինք որ արտասանի մեր հաւատի դաւանանքը, և մեզ աղօթքի հրաւիրի, այնուամենայնիւ մենք չպիտի արհամարենք այս յայտարարութիւնը։

Ահա այստեղ ջուր կայ. մենք կը կատարենք մեր լուացման արարողութիւնը և կաղօթենք։

1) Զորս այդի, չորս պարտէզ։ 1) Զօհրէկէս օր։

Ճիշտն ասած՝ ես երբէք ջերմ աղօթող չէի եղել.

Այն օրից ինչ ես բաստ 2) էի նոտել Ղումի սըբավայրում, ուր ես այնքան աղօթել էի, որ ինձ կը բաւականանար իմ ամբողջ կեանքում, և ուր ես մյնքան աւելորդ երկրպագութիւններ էի արել—այս, այն օրից՝ ես միշտ զանցառութեան էի տուել իմ կրօնական պարտականութիւնները, և միմիայն այն ժամանակ էի կատարել՝ երբ տեսել էի որ չկատարելով՝ անձս վտանգի է ենթարկուելու: Բայց այստեղ, այս անսուրբ երկրում, ուր մարդ ազատ է այդպիսի վտանգներից, ես շատ եղանիկ էի զգում և երբէք էլ փոյթ չունէի եթէ չէի կատարում կրօնական պաշտամունքներս. սակայն այս դաշտում, ես չէի ցանկանում վիրաւորել ընկերիս, և թէպէտ ես մերժեցի նրա առաջարկը, բայց և այնպէս հաւաստիացրի նրան, որ ես կը սպասեմ մինչև ինքը իր աղօթքը վերջացնի:

Ամենից առաջ, նա մի մօտ առուակում լուաց իր ձեռները, թևերը, ոտները և ականջների ետևը և յետոյ ստուգելով Մէքըայի կողմը, նստաւ գետնի վրայ և սկսեց մազերը սանրել: Ապա նա իր գրպանից հանեց իր կնիքները, մատանիները, հայելին ու ամեն արժէքաւոր բան, որ նա ունէր իր վրայ, և ծոցից հանելով սուրբ կաւի 1) կտորը, ինչպէս և իր թէսըին՝ 2) դրեց իր առջև և աղօթելու առաջին դիրքը բռնեց:

Անհաւատոները հաւաքուեցին մեր շուրջը: Թէ նրանք մեզ ինչի տեղ էին գնում՝ դժուար է ասել: Չատ հաւանականաբար նրանք կարծում էին թէ մենք ձեռնածուներ էինք, որովհետեւ նրանք շատ մեծ հետաքրքրութեամբ էին նայում այն զանազան իրերին, որ Մահմէդ ըէգը իր գրպանից հանել խոտի վրայ էր դրել:

Երբ Մոհամէդ ըէգը իր ոտները զոյգ դրած կանգնած էր և ամենայն ջերմեանդութեամբ արտասանում էր ֆաթէն 3), և երբ նա իր թևերը բարձրացրեց, անհաւատոները, ես հաւատացած եմ, կարծեցին որ նա շուտով պիտի թռչէր օդի մէջ կամ պիտի բարձրանար ու մի պտոյտ գործելով կրկին իջնէր իր ոտների վրայ, ինչպէս անում էին իրանց խեղկատակները, Սակայն երբ նրանք տեսան, որ նա իր ձեռները բարձրացնելով կատարեց իր երկրպագութիւնը, ճակատը դիպցնելով ցեսի կտորին, որի վրայ մակագրած էր մեր սուրբ մարգարէի և տասներկու իմամների անունները՝ նրանք կարծես թէ յուսա-

2) Ապաստանուել էի. 1) Պարսիկները աղօթելու՝ իրանց առջև են դնում մի կտոր չոր ցեխ, որ ասում է իբր թէ Մէքըայի հողից է: 2) Մեղեդիկ, 3) Հորանի առաջին աղօթքը (գլուխը).

հատեցին, որովհետև չկատարուեց իրանց սպասածը, Նրանցից  
մէկը լրբութեամբ յանդգնեց վերցնել այդ կաւի կտորը, որին  
լաւ նայելով տուեց իր ընկերներին՝ տեսնելու:

Իս ազգային պատուարժանութիւնը վիրաւորուեց:  
Ես թէե ամբարիշտ էի, այնուամենայնիւ չէի կարող տա-  
նել այդպիսի լրբութիւն, այդպիսի վիրաւորանք, չէի կարող  
տեսնել մեր ոռոր Մէքքայի կաւի կտորի անարգուիլը: Ես  
յառաջ նետուեցի անհաւատների ձեռքից խլելու այդ նշանը,  
սակայն իմ այդ փորձն արժանացաւ նրանց ծաղրական աղա-  
ղակներին: Մոհամէդ բէզզ սաստիկ զայրացած՝ ոտի կանգնեց  
և իր կրօնն անարգուներին պատժելու վճռականութեամբ՝  
դանակը քաշեց և մօտ էր միենու անհաւատներից մէկի փորը՝  
երբ նա մի աներևոյթ ձեռքից—մի դկի կամ անգլիացի Ջինի  
ձեռքից—իր փորին այնպէս մի ուժգին հարուած ստացաւ,  
որ նրա զայրոյթը փսխուեց բերանից, մօրուքը ցրուեց, երեսն  
սպիտակեց՝ մեռելի երես դարձաւ և աչքերից ջուր սկսեց  
հոսել:

Աղօթքը դեռ երբէք այնքան ջերմեռանդ չէր եղել՝  
Նրա բերանից փոխանակ օրհնութեան բառեր դուրս գալու,  
անէծքներ դուրս թափեցին, և երբ նա կարողանում էր շունչ  
քաշել՝ նզովք էր կարդում ամբողջ անգլիացի ազգի գլխին:

Մեր դրութիւնը շատ սոսկալի էր, մանաւանդ երը մեզ  
շրջապատող մարդիկ տրամադրուեցին Մոհամէդ բէզզն աւելի  
խիստ պատիւ տալ, երկի նրա փորին հասցրուած հարուածը  
բաւականութիւն չէր տուել նրանց:

Այդ մարդկանց մէջ մէկը կար, որ ամենից աւել զայ-  
րացած էր: Նա կատարում էր շմաքաջործութիւններ, որոնց  
նապատակը մենք ոչ մի կերպով չէինք կարողանում համականալ:  
Նա՝ այդ մարդը, մի անգամ իր բոռնցքը դէմ բռնեց իմ բթին  
և յետոյ իր բաճկոնակը հանեց, իմ կարծիքով՝ նա այդ ցոյցով  
թշնամութիւն էր նշանակում, թէպէս ես գիտէի որ գլխարկ  
վերցնելը (նա իր գլխարկն էլ վերցրեց) հակառակն էր նշա-  
նակում: Ես շատ զարմացայ երբ տեսայ որ բազմութեան մի-  
ջից մի ուրիշ մարդ էլ դուրս եկաւ, յառաջ քայլեց և նոյնպէս  
հանեց իր բաճկոնը:

«Ճարօրինակ մեծարանքներ են սրանք», մտածեցի ես.  
բայց ես շուտով հասկացայ ամեն բան: Բազմութեան մէջ ես  
ճանաչեցի մեր դեսպանի ծառայութեան մէջ գտնուող անգլի-  
ացիներից մէկին, և հազիւ ժամանակ ունեցայ ինձ ճանաչաց-  
նելու նրան՝ երբ, ով զարմանք, Մոհամէդ բէզզը ու ես ակա-  
նատես եղանք մի կոուի, որ տեղի ունեցաւ այդ երկու հոգու

մէջ—մի կորիւն նման մեր փահլիւանները <sup>1)</sup> անգամ դեռ չէին-  
արել:

Նրանք կոռուցին եռանդով ու վճռականութեամբ, սակայն  
շատ շուտով մեր դեսպանի ծառայ անգլիացին յաղթող հանդի-  
սացաւ: Նրա բռունցքներն աւելի թունդ էին տեղում իր հակա-  
ռակորդի երեսին՝ քան ճիպունները՝ Փալախկային կապած ոտ-  
ների տակին: Նա այնքան հարուածեց նրան, մինչև նրա երեսը  
բոլորվին կորցրեց իր դժագրութիւնը և նա գթութիւն խըն-  
դրեց:

Լաւ ծեծ ուտելուց յետոյ, վերջապէս նա հաշտուեց իրան  
յաղթողի հետ, երկուան էլ ձեռք թօթուեցին իրար հետ և եր-  
կուսով հեռացան, ըստ երևոյթին, որպէս լաւ բարե-  
կամներ: Մենք, ինչևէ, չէինք կարողանում զարմանքից  
դուրս դալ. ոչ էլ կարողանում էինք ամեննեին հասկանալ մեր  
անգլիացի ծառայի միջամտութեան նպատակը, թէպէտ նա մեզ  
հաւաստիացրեց, որ իբր թէ ինքը կոռւց միայն մեզ պատուելու  
համար:

Մենք յաճախ լսել էինք, որ արարները շատ հիւրասէր  
են, որ նրանք շատ քաղցրութեամբ են վարւում օտարականների  
հետ: Մենք լսել էինք, որ արարը իր վերջին ոշխարն անգամ  
մորթում է օտարականին հիւրասիրելու համար. որ նա ինքն  
իրան զրկում է ամեն բանից, որպէսզի չինի թէ իր հիւրը  
տուժի կամ անհանգիստ լինի. բայց կանգնել և կոռւել, և իր  
աչքերը կուրացնելու վասնգին ենթարկել կամ ծեծուել ու գլոր-  
ուել՝ այդ մենք երբէք չէինք լսել:

Եւ այնուամենայնիւ մենք տեսանը որ մի անհաւատ նոյն  
գործը կատարեց—մի անհաւատ՝ որին մենք մեր մտքում դա-  
տապարտում էինք յաւիտենական պատժի: Երկար ժամանակ  
Մոհամէդ բէգն իր միտքը տանջում էր ու չէր կարողանում  
իմանալ թէ ինչ բանի վերագրել այդ երևոյթը: Շատ մտածե-  
լով նա միայն այսքանն հասկացաւ, որ ճակատագրի շնորհիւ  
այդ ծեծը, որ շատ հաւանականաբար իրան պիտի տրուէք՝ տր-  
ուել էր մի ուրիշի: Մենք տուն վերադարձանք շատ բացական-  
չութիւններ անելով և ապշեցնելով դեսպանին՝ մեր արկածը  
նրան պատմելով:

<sup>1)</sup> Ըմբէշներ.

ԴԼ, ԻԷ.

Հաջի Բարան նկարագրում է պարլամենտի բացումը (նիստը): — Նա խօսում է անդիմական մի քանի սսվորութիւնների մասին:

Մինչ այս՝ արդէն մի մեծ և ընդհանուր շարժում էր անդիմական մէջ: Մինչ ցարդ դատարկ մնացած աները յանկարծ լցուեցին բնակիչներով: Այն փողոցները, որ մենք առաջ կարծում էինք շատ բազմամարդ էին՝ այժմ լցուեցին այնքան մեծ բազմութեամբ և այնքան բազմաթիւ կառքերով, որ մարդ դժուարութեամբ էր կարողանում անց ու դարձ անել: Կանայքն սկսեցին այս ու այն կողմը վազվել: Նրանք գնում էին միմիանց տներ: զարմանալի էր տեսնել թէ ինչ շարժում կար նրանց մէջ էլ: Ընդհանուր տեսարանը մեղ յիշեցրեց Սուլթանի էլ ամարանոցից՝ մեր Շահի թէհրան վերադառնալն իր ամբողջ բանակով:

Մենք հետաքրքրուեցինք՝ իմանալու այս տեսարանի պատճառը: Մեզ զանազան բացատրութիւններ տուին: Մեզ ասացին թէ պետական մեծ խորհուրդը պատրաստում էր նիստն ունենալու, յայտնեցին նաև որ, թէպէտ Անդիմայում արդէն աւելի քան հազար հատոր օրինաց գրքեր կամ՝ այնուամենապնիւ գարձեալ կարիք էր զգացնում աւելին ունենալու: Ոմանք ասում էին որ, իբր թէ կառավարութիւնը շատ փող է շապայլում, և թէ պիտի վճռուի որ ապագայում նա պակաս ծախսի: Ուրիշները հաւաստիացնում էին մեզ թէ մեծ խորհուրդը նիստ էր ունենում վիճարաններու մի հին խնդրի մասին, որի վրայ նրանք հականառել էին վերջին հարիւր տարրնայ ընթացքում՝ առանց սակայն մի բան առաջ տանելու կամ մի որոշ վերջաւորութեան գալու: Այդ հին հարցը կամ իննդիրն այն էր թէ արդեօք իրանց ժողովրդի եօթը միլիօնը պիտի շարունակի դժգոհ և ապատամբ մնալ՝ թէ հակառակը:

Այս բոլոր ասածներին մենք ոչ մէկին չէինք կարողանում հաւատալ, որովհետև մենք մեղ տալիս էինք այն հարցը թէ միթէ խելքի գալիք բան է որ անգլիացու պէս մի հզօր, մի հարուատ և մեծ աջողութիւն վայելող ազդ իրան ենթարկի այդպիսի չլսուած ամբաստանութիւնների: Դեսպանը վճռեց որքան կարելի էր, իրողութիւնն իմանալ, որպէս զի լիովին հաղորդէր իր վեհապետին—արքայից արքային:

— Այդ ինչպէս է, ասաց նա, մենք միայն մէկ գիրք ունենք—մեր դուրանը, որի մէջ ամփոփուած է մեր բոլոր օրէնք-

ները. իսկ այստեղ, ասաց նա, մենք տեսնում ենք որ ուղաւարեներով գրքեր կան և դարձեալ բաւական չեն համարւում. Անգլիայում ամեն մի զազի կամ շէյհօլիսլամ եթէ պատահմամբ փոխադրուելու լինի մի ուրիշ տեղ դատաւորութիւն անելու. Նրան հարկաւոր կը լինի առ նուազը յիսուն ուղտ, որպէսզի կարողանայ իր հետ տանել իրան հարկաւոր եղած գիտութիւնը: Յետոյ, զալով այն ինպին որ ուզում են կառավարութեան ծախքերը սահմանափակել կամ աւելի քչացնել, յանուն Ալլահի, ապա ի՞նչի պէտք է թագաւորը—եթէ նա անսահման իրաւունք ու իշխանութիւն չունի իր գանձարանի վրայ: Մեր շահընշահը կտրել կտար. այն մարդի ականջը—ով կուզի լինի նա—որ կը համարձակուի քննել կամ հարց դնել թէ մի թագաւոր ինչ իրաւունքներ ունի իր սեփական հարստութեան կամ նոյն իսկ իր հպատակների ստացուածքի և կեանքի վրայ:

Միւս ինդիքը մեր խելքից դուրս բան էր. դա մի ինդիք էր՝ որ մենք ամենակին չէինք կարողանում հասկանալ, ըմբռնել: Դա մինչև մի աստիճան վերաբերում էր կրօնի: Մեր լսած պատմութիւններից պարզ էր, որ Անգլիայում բնակուղ մահմեղականները՝ կրօնի տեսակէտից՝ շատ ողորմելի վիճակում, էին. որովհետև եթէ Անգլիան իր հպատակներին թոյլ չէր տալիս աղօթել, ուրեմն, յանուն Շահի մօրուքի, ի՞նչ պիտի սպասէինք մենք մահմեղականներս:

Չնայած անգլիացիների՝ իրանց թագաւորի դէմ բռնածայս ընթացքին՝ երկում է որ նա՝ թագաւորը, ամեն տարի թագակիր գլխի բոլոր փառքով, շքով և մեծութեամբ՝ իր յօժար կամքով գնում է պետական մեծ ժողովը բաց անելու և մինչև անգամ հրաւիրում է այդ ժողովին մտածել և կարգադրել թէ ի՞նչքան ծախք պիտի անի ինքը. նա նաև հրաւիրում է նրան որոշել նախարարների, զօրագլուխների, զօրագնդերի և նաւերի թուերը, դեսպաններ նշանակել և մի խօսքով որոշել իր անելիք բոլոր ծախքերը:

Այդ մեծ խորհուրդը, ի՞նչպէս մեզ հաւատացըին, մինչև անգամ համարձակում է կարգադրել թէ թագաւորը ի՞նչպէս պէտք է պահի իր սեփական կնոջը: «Եթէ մեր այս ըոլոր լսածների գոնէ կէսը ճշմարիտ է, ասացինք մենք, ուրեմն պիտի հաւատանք որ միւս կէմ էլ ճշմարիտ է:

Միրզա Ֆիրոզը հրաւիրուեց ներկայ լինել այդ մեծ ժողովի բացման հանդիսին: Նա ընդունեց հրաւէրը, որովհետեւ ուզում էր իր աչքով տեսնել ամեն բան, ապա համոզուել: Ի՞նչքան մենք կարողացանք իմանալ՝ այդ մեծ ժողորը մինչև

մի աստիճան նմանում էր մեր այն մեծ սէլամ-խօմին, որ  
ամեն տարի տեղի է ունենում Նովրուզի տօնին:

Մէհմանդարը յայտնեց գեսպանին որ այդ առթիւ թագաւորին ներկայացող անձնաւորութեանց թիւը՝ սահմանափակ լինելով ցանկալի էր որ ոչ ես, Հաջի Բարսա՛ և ոչ էլ մեզանից որևէ մէկը գնար գեսպանի հետ Հետևապէս գեսպանը գնաց միմիայն մէհմանդարի ընկերակցութեամբ, սակայն մենք վընտեցինք մի եղանակով ճանապարհ գտնել՝ տեսնելու արքայական թափօրը:

Ամբողջ քաղաքը շարժման մէջ էր: Մենք գեռ անհաւատ-ների այդքան հոծ բազմութիւն չէինք տեսել: Մեւք՝ մի բուռ ճշմարիտ հաւատացեալներ՝ մեծ բազմութեան մէջ աննշան էինք. բայց ուրախ էինք որ այդպէս էր. թէս մենք մեր մօրուքների մէկ մազն անդամ չէինք փոխիւ մեր առաջ շարժուող միլիօնաւոր ու ու գլխարկների հետ:

Մենք տեղաւորուեցինք մի ծառի տակ՝ այն պարտիզում որի միջով ճանապարհ էր բաց դէպի մեծ խոհրդի ժողովաւեղին: Մի քանի ծառուուիներ էին ընկած այն պողոտայի կողքերին, որտեղից թագաւորը պիտի անցնէր: Այդ պողոտայի երկու կողմին՝ գեղեցիկ ձիերի վրայ նստած հեծելազօրքեր էին կանգնած ճանապարհը ազատ պահելու համար:

Պահ մի մենք ամենից շատ ուշադրութեան առարկայ դարձանք, և մօտ էր որ նեղանայինք ամբոխի վարմունքից՝ երը՝ բարերախտաբար թագաւորի մօտենալը խլեց նրանց ուշադրութիւնը, և մենք աշքներու լայն չոելով սպասեցինք տեսնելու նորին մեծութեան անցը: Լսուեցին տարօրինակ ձայներ. մենք կարծեցինք որ գուցէ այդպիսի տարօրինակ ձայներ հանելով են անգլիացիք մեծարում իրանց թագաւորին: Այդ ձայները մի կերպով նմանում էին արաբ կանանց ձայներին, որ նրանք հանում են երբ մի մեծ անձնաւորութիւն մօտենում է իրանց: Աղաղակների, հառաջանքների խառնուրդ էր այդ ձայները:

Հէնց որ թագաւորի մեծ կառքը մօտեցաւ, ամբոխը խըստացաւ և մեր մօտ կանգնած հազարաւոր մարդիկը սկսեցին այնպէս շուոց հանել, որ մենք հաւատացինք որ ոչ մի թագաւոր աւելի սիրելի չէր իր ժողովրդին ինչպէս էր անգլիացւոցը: Ժողովրդի կողմից ցոյց տրուած այդ մեծ հաւատարմութիւնն ու յարգանքը ունեցաւ իր անմիջական աղքեցութիւնը, որովհետև մենք էլ յակամայից սկսեցինք նրանց միանալ մեր անկեղծ շշիւններով: Մենք սկսեցինք այնպէս ոգկորուած ու եռանդուն կերպով սուլել, որ մեր երեսի գոյնը սկսացաւ: Մողա-

նի<sup>1)</sup>) դաշտերի բոլոր օձերը միասին՝ չէին կարող իրանց կատազած ժամանակ՝ մեղանից աւելի մեծ շշին հանել:

Բոլոր թամաշայիների (հանդիսատեսների) համար դիտողութեան առարկայ դարձնանք. սակայն որքմն զարմացանք և նոյն իսկ, կարելի է ասել, որքմն վախեցանք մենք՝ երբ տեսանք, որ փոխանակ մեզ քաջալերելու և գովելու, ինչպէս մենք սովասում էինք, մեզ Մըջապատեցին մի մեծ խումբ մարդիկ՝ ներկած ճիպոտները ձեռքներում: Սրանց ետևից եկան մի քանի ծիաւորներ, որոնք շատ անքաղաքավարի կերպով մեզ հրաւիրեցին իջնեց ծառից, որի վրայ բարձրացել էինք, և հետևել իրենց... չգիտեմ... դէպի ուր:

—Ի՞նչ են ուզում այս մարդիկը, բացականչնց Մոհամեդ բէգը. Ի՞նչ աղտեղութիւն են ուտում սրանք:

—Կուզեն դրանց իմ դանակի համը առնել տամ, ասաց Աղա բէգը:

—Զաւակիդ հոգին սիրես, խստութիւն մի բանեցնիլ ասցի ես, եթէ աչ դրանք կը խփեն մեր փորերին, ինչպէս արին Մոհամեդ բէգին:

Տեսարանը շատ խառնուեց և մօտ էր մեր դրութիւնը վատանար. բայց մի լաւ հագնուած փրանկ մօտենալով և ճանաչելով մեզ՝ իսկոյն միջամտեց և ներկուած ճիպոտներով մարդկանց հասկացրեց, որ ինչ անկարգութիւն էլ որ արել էինք՝ առաջացել էր միայն տգիտութիւնից: Նա մեզ ազատեց նրանց ձեռքից և բարեսրտաբար ընկերակցեց մեզ դէպի տուն: Երբ տուն հասանք՝ մենք նրան պատմեցինք թէ Ի՞նչ էինք արել, և յետոյ իմացանք, որ մենք փոխանակ պատուելու անգլիացւոց Շահին՝ աւելի վատ էինք վարուել նրա հետ քան վարուամ են մի շան հետո:

—Լա իւ Ալլահ, գոչեց Մոհամեդ բէգը. այս Ի՞նչ երկիր է. ով էր մտածնեւ թագաւորին հայիոյել, այն էլ իր երեսին: Էհ, եկէք հեռանանք այս ժողովրդի միջից. սրանք վմտ մարդիկ են, մարդ երբէք այս մարդկանց չէ տեսնում աղօթելիս: Սրանց կանայքը անսմօթ են, սրանք աղտեղութիւն են կուտակում իրանց թագաւորի գլխին:

—Հոգիս վկայ, բացականչեց Աղա բէգը, ես կարծում էի որ Փրանկները սուլելով և շելով են պատիւ մատուցանում. բայց տես, մենք ի՞նչ աղտեղութիւն ենք կերել:

—Մեր թագաւորի ժողովրդականութիւնը, ասած յիշեալ

1.) Մի կառը գետին՝ որ ընկած է Արաքս գետի մօտ և նշանաւոր է իր բազմաթիւ օձերով:

պարոնը, կախումն ունի այնպիսի հանգամանքներից, որոնց վրայ աչ մի մարդկայն ոյժ չէ կարող իշխել ժողովուրդը ագէ է և նրան առաջնորդում են խարդախ դեմագոգներ<sup>1</sup>). Եթէ հայում է թանկ է, եթէ առետուրը դանդաղ է, եթէ ժողովուրդը տում է խաղաղութիւնը, կամ եթէ թագուհին վատ է ընթանում՝ ժողովուրդը իր գանգապը ներկայացնում է թագաւորի սուլելով: Հետեւալ տարին դիցուք թէ հացը թանկ չէ ամժան է և առետուրը տաք, ժողովուրդը թագաւորին տեսն լով ուրախութեան ցոյց է անում: Եթէ թագաւորի նաեւ ու զօրքերը յաղթութիւն են տալիս՝ ժողովուրդը չափազաբարի զգացում է արտայայտում:

Եթէ թագաւորի նախարարները լաւ ճառեր են խօսուածում են հարկերը թեթևացնել՝ ժողովուրդը իր կեան գոհում է իր արքայի համար: Ո՞վ է կարող ուրեմն երաշխւորել թէ ժողովուրդը երբ և ինչու գոհ կամ դժգով կըմի Դա այնքան անհաստատ է, ինչքան քամին որ փշում է:

— Լսեցէք պարոն, ասացի ես բռնելով մօրուքիս ծայ

և ցոյց տալով նրան, տեսնում էք այս:

— Այս, տեսնում եմ, պատասխանեց նա:

— Լաւ, ուրեմն սրանով ես երդում եմ—և սրանից առ սուրբ բան չկայ ինձ համար—երդում եմ որ եթէ թէհրաժ ժողովուրդը համարձակուի իր Շահի ներկայութեամբ թէ կամ նայուածքով և խօսքով որ և է անպատճեն արտայատող շարժում անի, նա իսկոյն ընդհանուր կոտորածի հրաման կարձակի և ոչ մէկին չի թողնիլ որ հետեւալ առաջ եան արեք տեսնի. Բոլոր իմամները վկայ, որ ասած այնքան մարդիտ է, ինչպէս գիտեմ, որ ես այս ըոպէիս այստեղ կանաչ եմ:

Այս խօսքերիս վրայ՝ պարոնի աչքերը ապշառքից չուցին, և նա գուցէ տեսնելով թէ մեզ համար ինչքան առ են միմիանց գլուխները, խոր գլուխն տուեց ու հեռացաւ:

Մինչ այս, դեսպանը վերադարձաւ, և երբ մենք նրան մէհմանդարին պատմեցինք մեր գլխին եկածը, նրանք մէթարեցին մեզ՝ միայն ծիծաղերով մեզ վրայ:

— Եթէ դուք, ասացին նրանք, անզիացի ամբոխից սուսում էք նոյն խոնարհութիւնն ու սարկութիւնը որ ունին պիտի սիկները՝ շատ սխալում էք: Նրանք այնքան տարրեր են, թքան տարքեր է մեր ալեկոծուող մերթ խաղաղուող ծայն տղմուտ ջրից, որից խմում է ուղար:

<sup>1)</sup> Ազգամքների կամ իտամակիչների պարագաւիները